ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի համար

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմը հայտարարում է մրցույթներ՝ հետևյալ պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար.

1. «Բուրաստանի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն
2. « Գեղանիստի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն
3. « Ուրցաձորի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն
4. « Զանգակատան ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն
5. «Գետազատի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն
6. «Ջրաշենի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն
7. «Դիմիտրովի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն

Կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հավակնորդ կարող է լինել այն գործունակ չափահաս Հայաստանի Հանրապետության քաղաքացին, որն ունի՝

1) բարձրագույն բժշկական կրթություն.
2) հանրային ծառայության առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ կամ առողջապահական բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.
3) չի լրացել հավակնորդի 65 տարին:

Մրցույթները կանցկացվեն 2024 թվականի նոյեմբերի 20–ին՝

1. «Դիմիտրովի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն ժ. 10:00-ին
2. «Գեղանիստի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն ժ. 13:00-ին
3. «Բուրաստանի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն ժ. 16:00-ին

Մրցույթները կանցկացվեն 2024 թվականի նոյեմբերի 21 –ին՝

1. «Ջրաշենի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն ժ. 10:00-ին
2. « Գետազատի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն ժ. 13:00-ին
3. « Ուրցաձորի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն ժ. 16:00-ին

Մրցույթները կանցկացվեն 2024 թվականի նոյեմբերի 22 –ին՝

1. « Զանգակատան ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն ժ. 14:00-ին

Մրցույթներին մասնակցելու համար քաղաքացիները Արարատի մարզպետի աշխատակազմ են ներկայացնում՝

1) դիմում.

2) մեկ լուսանկար 3 x 4 չափի.

3) աշխատանքային ստաժը հավաստող փաստաթուղթ.

4) ինքնակենսագրություն.

5) անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

6)բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի հավակնորդի դեպքում՝ նաև պարտադիր զինվորական ծառայության անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվոական ծառայությունից ազատված լինելու կամ տարկետման մեջ գտնվելու փաստը հավաստող փաստաթղթի) պատճենը.

7) տեղեկանք՝ դատվածության, դատվածությունը հանված կամ մարված լինելու վերաբերյալ .

8) տեղեկանք՝ սնանկության կամ դրա բաղակայության վերաբերյալ (պետական եկամուտների կոմիտեից).

9) տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիվանդությունների բացակայության վերաբերյալ.(արտահիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում իրականցնող հաստատությունից, որտեղ համապատասխան կարգով կցագրված է դիմատուն).

10) հավակնորդի ցանկությամբ՝ հրատարակված գիտական հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.

11) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (ըստ դիմումատուի ցանկության).

12)Կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգը (ներկայացվում է մրցույթի անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ, ինչի վերաբերյալ կազմվում է հանձնման-ընդունման ակտ), որը ներառում է Կազմակերպության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև Կազմակերպության մասնագիտական, ֆինանսատնտեսական

և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, Կազմակերպության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները:

4.Հավակնորդը փաստաթղթերը ներկայացնում է առձեռն կամ առցանց (ararat.andznakazm@mta.gov.am)՝ բացառությամբ Կազմակերպության զարգացման և բարեփոխման հայցակարգի, որը ներկայացվում է առձեռն:

5. Առձեռն փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, բացի ոչ աշխատանքային օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2024 թվականի հոկտեմբերի 16–ը:

Մրցույթները կկայանան Արարատի մարզպետի աշխատակազմի նիստերի դահլիճում (ք.Արտաշատ , Օգոստոսի 23/60): Մրցույթներին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմ (ք.Արտաշատ, Օգոստոսի 23/60, անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժին, հեռ.0235 2-45-11):